

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Նկատի ունենալով, որ Նորընտիր Պատրիարք՝ Ամենապատիւ Ս. Նուրիան Արք. Մանուկեան Սուրբ Աթոռոյ Լուսարարապետն էր եւ իր ընտրութեամբը որպէս Պատրիարք Առաքելական Սուրբ Աթոռին թափուր կը մնար Սուրբ Աթոռոյ Լուսարարապետի կարեւոր պաշտօնը՝ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ուխտի Միաբանական Ընդհանուր Ժողովը, 24 Յունուար 2013-ին, կէսօրէ վերջ ժամը 4-ին, Միաբանական Ընդհանուր Ժողովը գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու բացարձակ մեծամասնութեամբ ընտրեց Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեան որպէս Սուրբ Աթոռոյ Լուսարարապետ:

Քուէարկութեան արդիւնքը ստորեւ կը ներկայացնենք.-

Գերշ. Ս. Արիս Արք. Շիրվանեան 1 քուէ

Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեան 18 քուէ

Հոգշ. Ս. Սամուէլ Ծ.Վրդ. Աղոյեան 1 քուէ

Հոգշ. Ս. Պարէտ Ծ.Վրդ. Երէցեան 1 քուէ

Հոգշ. Ս. Բարսեղ Վրդ. Գալէմբերեան 8 քուէ

Սպիտակ 4 քուէ

Միաբանական Ընդհանուր Ժողովին ներկայ էին երեսուն երեք անդամներ, Միաբանական Ընդհանուր Ժողովի նիստի աւարտին, նորընտիր Սուրբ Աթոռոյ Լուսարարապետ Սրբազան Հայրը շնորհակալական խօսքն ըրաւ միաբան հայրերուն, որմէ յետոյ բովանդակ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ նորընտիր Պատրիարքի՝ առաջնորդուեցան դէպի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար:

Մայր Տաճարի զանգակները ղօղանջեցին աւետիսը ընտրութեան արդիւնքին: Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Գլխաղորի մատրան խորանին առաջ, նորընտիր Լուսարարապետ Սրբազան Հայրը ծնկաչոք աղօթքն ըրաւ եւ ստացաւ Մայր Տաճարի բանալիներն ու տումարը: Գլխաղորի մատրան առաջ, միաբան հայրեր շնորհաւորեցին նորընտիր Լուսարարապետ Սրբազան Հայրը, որմէ յետոյ կրկին բարձրացան Պատրիարքարան:

Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեան (աւագանի անունով Յովհաննէս) ծնած է 1940-ին Պէյրութ, Լիբանան: Աբեղայական ձեռնադրութիւն ստացած է 1968-ին ձեռամբ Երջանկայիշատակ Ամենապատիւ Ս. Եղիշէ Արք. Տէրտէրեան Պատրիարքի: 1972 -ին ստացած է վարդապետական աստիճան՝ ձեռամբ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի: Ձեռնադրուած է Եպիսկոպոս 1988-ին ձեռամբ Երջանկայիշատակ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի: 2006-ին, Սեւան եպիսկոպոս Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական կոնդակով ստացած է արքութեան պատիւ:

Տասնեակ տարիներէ ի վեր, Սրբազան Հայրը կը վարէ Պատրիարքութեանս Ելեւմտից Դիւանի կարեւոր պաշտօնը:



Նորընտիր Սուրբ Աթոռոյ Լուսարարապետ՝
Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան:



Նորընտիր Սուրբ Աթոռոյ Լուսարարապետի շնորհակալական խօսքը:



Յետ Պատրիարքական Հնարություն խմբանկար